ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

14 Դեկտեմբեր 2017 թվականի N 36-Ն

ԸՆԴԵՐՔԻ ՏԵՂԱՄԱՍԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ և ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՁԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 55-րդ, 56-րդ և 57-րդ հոդածներով, հիմք ընդունելով <Մեղրու ՃՇՇՁ> ՍՊԸ-ի 2016 թվականի օգոստոսի 9-ի թիվ 7 դիմումը, աշխատանքային փոփոխված նախագծի վերաբերյալ շրջակա միջավայրի վրա ազդեցության և տեխնիկական անվտանգության փորձաքննությունների դրական եզրակացությունները և <Հանրապետական երկրաբանական ֆոնդ> ՊՈԱԿ-ի 2017 թվականի փետրվարի 22-ի թիվ Ֆ-53/17 և փետրվարի 24 -ի թիվ Ֆ-57 /17գրությունները՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. <Մեղրու ՃՇՇՁ> ՍՊ ընկերությանը ՀՀ Սյունիքի մարզի Լեհվազի գրանոդիորիտների հանքավայրից արդյունահանում կատարելու համար, թիվ ՇԱԹՎ-29/290 թույլտվության մեջ կատարել փոփոխություններ՝

1) թույլտվության գործողության ժամկետը երկարաձգել 39.7 տարով, սահմանելով մինչև՝ 2056 թվականի հոկտեմբերի 9-ը:

2) ՀՀ Սյունիքի մարզի Լեհվազի գրանոդիորիտների 09.02.2005թ-ին տրամադրված 120000 մ^3 պաշարով հանքավայրի 01.01.2017թ դրությամբ 8576 մ^3 մնացորդային պաշար ունեցող տեղամասն ընդլայնել՝ <1.X=4314292.5 Y=8604494.7, 2.X=4314348.7 Y=8604473.0, 3.X=4314450.4 Y=8604505.8, 4.X= 4314459.5 Y=8604558.4, 5.X= 4314448.5 Y=8604595.3, 6.X=4314551.5 Y=8604612.2, 7.X=4314552.7 Y=8604626.6, 8.X=4314508.0 Y=8604709.8, 9.X=4314420.0 Y=8604665.0, 10.X=4314373.0 Y=8604665.0, 11.X=4314363.5 Y=8604697.5, 12.X=4314349.4.0 Y=8604695.0, 13.X=4314303.3, Y=8604630.7, 14.X=4314330.3 Y=8604571.4.0, 15.X=4314302.9 Y= 8604505.5> <ARM WGS-84> կոորդինատային համակարգով բնութագրվող 818594 մ^3 պաշար ունեցող տեղամասով, ընդհանուրը տրամադրելով՝ <1.X=4314292.5 Y=8604494.7, 2.X=4314348.7 Y=8604473.0, 3.X=4314450.4 Y=8604505.8, 4.X=4314459.5 Y=8604558.4, 5.X=4314448.5 Y=8604595.3, 6.X=4314551.5 Y=8604612.2, 7.X=4314552.7 Y=8604626.6, 8.X=4314501.5 Y=8604722.1, 9.X=4314349.4 Y=8604695.0, 10.X=4314303.3 Y=8604630.7, 11.X=4314330.3 Y=8604571.4, 12.X=4314302.9 Y=8604505.5, <ARM WGS-84> կոորդինատային համակարգով բնութագրվող տեղամասը, տրամադրելով ընդհանուրը 827170 մ^3 պաշար:

3). Հանքի տարեկան արտադրողականությունը սահմանել՝ 20 000 մ³ պաշար:

2.Աշխատակազմի ընդերքի գործակալության պետին՝

1) 2 օրվա ընթացքում սույն հրամանի 1-ին կետի համաձայն կատարել փոփոխություն ընկերության՝ օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ ՊՎ-290 պայմանագրում, լեռնահատկացման ԼՎ-290 ակտում և ծանուցել ընկերությանը հրամանը ստանալուց հետո 10-օրյա ժամկետում՝ պայմանագրի փոփոխությունն իր կողմից վավերացնելու մասին:
2) ընկերության կողմից պայմանագրում կատարված փոփոխությունները վավերացվելուց հետո 10-օրյա ժամկետում ընկերությանը տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման թույլտվության, պայմանագրի, լեռնահատկացման ակտի փոփոխված փաստաթղթային տարբերակը.
3) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագրի փոփոխությունը չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փոփոխությունների փաթեթը չստանալու դեպքում, սույն հրամանը կհամարվի ուժը կորցրած.
4) ապահովել համապատասխան գրառումների կատարումն արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:
3. <<Հանրապետական երկրաբանական ֆոնդ >> ՊՈԱԿ-ի տնօրենին – ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:
4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կարգով կամ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելուց հետո 2-ամսյա ժամկետում:
5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ